

Ծառայությունների փաթեթ

«Երեքը մեկում 50+»

Ֆիքսված Ինտերնետ և հեռախոսակապ

Ներառում է

Ֆիքսված Ինտերնետ	50 Մբիթ/վրկ
Դեպի Beeline ֆիքսված ցանց	180 ռոպե
Հեռուստատեսություն	62 ալիք

Մանրամասն

Գները ներկայացված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

Ծառայությունների փաթեթին միանալու համար անհրաժեշտ է այցելել մոտակա Beeline Վաճառքի և Սպասարկման գրասենյակը:

"Երեքը մեկում" ծառայությունների փաթեթը գործում է միայն ֆիզիկական անձանց համար: Սույն առաջարկի շրջանակներում բոլոր ծառայությունները պետք է գրանցվեն նույն բաժանորդի անունով

Բաժանորդը չի կարող իր անվամբ կնքել մեկից ավել պայմանագիր "Երեքը մեկում" ծառայությունների փաթեթից օգտվելու:

* Ակցիայի շրջանակներում ներկայացված սակագները գործում են մինչև օգոստոսի 31-ը ներառյալ միանալու դեպքում

Ֆիքսված ինտերնետ

Hi-Line Ինտերնետ ծառայության համար օգտագործման կարող է տրամադրվել Wi-Fi մոդեմը 13 ամիս ժամկետով պայմանագիր կնքելու դեպքում: Պայմանագիրը մինչև 13 ամիսը լրանալը խզելու դեպքում բաժանորդը պարտավոր է վճարել մոդեմի արժեքը՝ 18000 դրամ(ներառյալ ԱԱՀ): Պայմանագիրը 13 ամիսը լրանալուց հետո խզելու ժամանակ Բաժանորդը պարտավոր է հետ վերադարձնել WiFi մոդեմը կամ վճարել մոդեմի վաճառքի գինը՝ 4000 դրամ ներառյալ ԱԱՀ:

Beeline Ինտերնետ ծառայության համար օգտագործման կարող է տրամադրվել Wi-Fi ռոուտեր 13 ամիս ժամկետով պայմանագիր կնքելու դեպքում: Պայմանագիրը մինչև 13 ամիսը լրանալը խզելու դեպքում բաժանորդը պարտավոր է վճարել մոդեմի արժեքը՝ 12000 դրամ(ներառյալ

ԱԱՀ): Պայմանագիրը 13 ամիսը լրանալուց հետո խզելու ժամանակ Բաժանորդը պարտավոր է հետ վերադարձնել WiFi մոդեմը կամ վճարել մոդեմի վաճառքի գինը՝ 4000 դրամ ներառյալ ԱԱՀ:

Hi-Line և Beeline Ինտերնետ ծառայությունների բաժանորդները կարող են անցում կատարել "Երեքը մեկում" ծառայությունների փաթեթին՝ վճարելով նախկինում օգտագործման տրամադրված մոդեմի արժեքը՝ մինչև 13 ամիս ժամկետը փոխելու դեպքում համապատասխանաբար 18000 դրամ (ներառյալ ԱԱՀ) և 12000 դրամ (ներառյալ ԱԱՀ), 13 ամսից հետո անցում կատարելու դեպքում՝ 4000 դրամ (ներառյալ ԱԱՀ):

Ինտերակտիվ հեռուստատեսության ծառայություն

"Երեքը մեկում" ծառայությունների փաթեթը մատուցվում է "Քրոսս Հիթեք"՝ ՍՊԸ հետ համատեղ:

Բաժանորդի հետ կնքվում է տարեկան պայմանագիր

Բաժանորդին տրվում է միաժամանակ 3 սարքից օգտվելու հնարավորություն՝ հեռուստացույց, պլանշետ, սմարթֆոն

Հավելյալ ծառայություններ

1. Electronic Program Guide (EPG) Հաղորդումների էլեկտրոնային ցանկում (EPG) ներկայացված են հեռուստաալիքների ծրագրերը: Այստեղ Դուք կարող եք ծանոթանալ հաղորդումների նկարագրությանը, տեղեկանալ հաղորդումների տևողության, սկսվելու և ավարտվելու ժամերի մասին:

2. Catch-Up TV Դուք կարող եք դիտել մինչև 48 ժամ առաջ թողարկված հաղորդումները, լրատվական նախագծերը, սերիալները և ֆիլմերը: Catch-Up-ի հնարավորությունը հասանելի է անմիջապես Հաղորդումների էլեկտրոնային Ցանկից: Ընտրեք հաղորդումը և դիտեք այն Ձեր նախընտրած ժամանակ:

3. Pause/Restart Live TV Դադար և Ետ/Առաջ հրահանգների միջոցով Դուք կարող եք կառավարել հեռուստաալիքների ուղիղ եթերը, ինչպես նաև վերականգնել ուղիղ եթերում ընթացող հաղորդման կամ ֆիլմի բաց թողնված հատվածը և դիտել նախընտրած հաղորդումը կամ ֆիլմը սկզբից:

4. Recording CTV-ի բաժանորդները հնարավորություն ունեն ձայնագրելու ուղիղ եթերում ընթացող, ինչպես նաև հաջորդիվ ցուցադրվող հաղորդումները, պահելու դրանք CTV հեռուստատեսային համակարգի անձնական տեսադարանում և դիտելու ավելի ուշ՝ նախընտրած ժամանակ:

5. Video on Demand (VoD) CTV ծառայության շրջանակում բոլոր բաժանորդներին հասանելի է հարուստ տեսադարան, որտեղ ներկայացված են ֆիլմեր, մուլտֆիլմեր, թատերական ներկայացումներ, համերգներ և երաժշտական տեսահոլովակներ: CTV-ի տեսադարանում հասանելի է նաև MEGOGO.NET օնլայն կինոթատրոնի բոլոր ֆիլմերը:

6. Parental Control Ծնողական վերահսկողություն, որը հնարավորություն է տալիս

հեռուստաալիքների կամ հաղորդումների համար կիրառելու տարիքային սահմանափակումներ, ինչպես նաև ստեղծելու լրացուցիչ օգտագործողներ և կառավարելու վերջիններիս հասանելի կոնտենտը:

7. Socials Ցանկության դեպքում Դուք կարող եք անմիջապես CTV հեռուստատեսային համակարգից մեկնաբանություններ թողնել տարբեր սոցիալական ցանցերում և ընկերների հետ կիսվել հաղորդման կամ ֆիլմի մասին տպավորություններով:

8. Follow me Դուք կարող եք հաղորդումը սմարթֆոնով կամ պլանշետով դիտելու ժամանակ «փոխանցել» այն հեռուստացույցին և շարունակել հաղորդման դիտումը հեռուստացույցով:

9. Search Որոնման հնարավորություն, որն օգնում է արագ գտնել հետաքրքրող հեռուստաալիքը, հաղորդումը կամ ֆիլմը: Որոնումը կարելի է կատարել 3 լեզվով՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն: